«Եկե՛ք ինձ, բոլոր հոգնածներ ու բեռնավորվածներ»։

Մատթեոս 11:28

ԲԱՐԻ ԼՈՒՐ

Ապրիլ 2026, N3 (178)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՀԱՎԱՏՔԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐ

ԲԱՐԻ ԼՈՒՐ

ԱՄՍԱԳԻՐ

Ապրիլ 2026թ., N3 (178)

Լույս է տեսնում 2009թ. մայիսից

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ ԿԱՐԴԱՑԵ՛Ք

Աստծո ծառան գնաց իր Տիրոջ մոտ 1

Մամիկոն Ղազարյան
Ջգո ույշ եղեք 2

Հրահատ Ամիրբեկյան
Տեսնո՞ւմ ես այս կնոջը 7

Թե ինչպես բժշկվեցի քաղցկեղից, վկայություն 11

Բացե՛ք դարպասները 13

Մայրական աղոթքի զորությունը 14

Աստվածաշունչը՝ մայրիկիս թարգմանությամբ 15

Մանրապատումներ 16

Սիրելի՛ ընթերցողներ, խնդրում ենք աղոթել, որ թերթի միջոցով տարածվի Ավետարանի Բարի Լուրը, ու ցանվեն Ճշմարտության սերմերը, որպեսզի մարդիկ դառնան Աստծուն և Հավիտենական Կյանք ունենան:

Սիրելի՛ ընթերցողներ, խնդրում ենք ձեր դիտողությունները, առաջարկությունները ու նվիրատվությունները ուղարկել խմբագրություն: Մենք սիրով հաշվի կառնենք ձեր արձագանքները:
Էլ. հասցե՝ info@barilur.org

ԱՍՏԾՈ ԾԱՌԱՆ ԳՆԱՑ ԻՐ ՏԻՐՈՋ ՄՈՏ

Խաղաղություն ձեզ, սիրելի Աստծո ժողովուրդ: Հայտնում ենք, որ երկար և ծանր հիվանդությունից հետո, հավերժությանը միացավ Հայաստանի ԱՀՔ-ի եկեղեցու եպիսկոպոս, մեր թանկագին Սամվել եղբայրը:

Սամվել Զաքարյանը ծնվել է 1951 թվականի մայիսի 22-ին՝ Հայաստանում: Մաթեմատիկական թեքումով դպրոցում սովորելու ժամանակ լսել էր Աստծո Խոսքը և ապաշխարել: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի Մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետը: Սովորել և ավարտել է, ապա աշխատել որպես ծրագրավորող: Աշխատանքի վայրում խորը հարգանք են ունեցել իր նկատմամբ:

Ունի 8 երեխա: Եվ շատերը վկայում են Սամվել եղբոր հոգատարության մասին՝ կապված կարիքավորների, որբերի և որբեվայրիների հետ: Պատմում են, որ ինքը ջանք չի խնայել, շատ անգամներ օգնել, բարի խորհուրդներ է տվել, աղոթք է արել եկեղեցու կարիքավոր անդամների համար:



Կյանքի բոլոր տարիները նա նվիրել է Աստծո ծառայությանը: Սամվել եղբայրը միշտ ասում էր, որ պատրաստ է Տիրոջ հետ ապրել և սիրով ծառայություն էր անում Նրան այս երկրի վրա:

2026 թվականի ապրիլի 18-ին նա միացավ հավերժությանը:

Խնդրում ենք աղոթել նրա ընտանիքի անդամների մխիթարության համար: Աստված օրհնի ձեզ:

ԶԳՈ՛ՒՅՇ ԵՂԵՔ

Սիրելինե՛ր, շատ մարդիկ կան, ովքեր չունեն շնորհակալ սիրտ, նրանց մոտ ավելի շատ գերակշռում է տրտունջը, քան գոհությունը: Աղոթե՛ք Աստծուն, որ ձեզ գոհացող սիրտ տա ամեն ժամանակ: Ամեն պարագայում փա՛ռք տվեք Աստծուն:

Ե՛վ իմ, և՛ ձեզ համար ցանկանում եմ կարդալ «Սերմնացանի առակը»:

«Ահա սերմ ցանողը ելաւ որ սերմ ցանէ. ու երբ կը ցանէր, մէկ քանիները ճամբուն քով ինկան, և թռչունները եկան ու կերան զանոնք: Եւ ուրիշները ապառաժուտ տեղերու վրայ ինկան, ուր շատ հող չկար, և շուտ մը բուսան՝ հողին խորունկութիւն չունենալուն համար. Սակայն արևուն ծագած ատենը այրեցան, ու արմատ չունենալնուն համար չորցան: Եւ ուրիշները ինկան փուշերու մէջ, և փուշերը ելան ու խեղդեցին զանոնք: Եւ ուրիշները ինկան աղէկ հողի մէջ, ու պտուղ կու տային՝ ո՛րը մէկուն տեղ հարիւր, ո՛րը վաթսուն, և ո՛րը երեսուն» ***(Մատթ. 13:4-8):*** Այս առակում հատկապես ուզում եմ խոսել երրորդ տարածքի վրա ընկած սերմի մասին. *«...Եւ ուրիշները ինկան փուշերու մէջ, և փուշերը ելան ու խեղդեցին զանոնք»:*

Տեսնենք, թե ինչպես է Տերը մեկնում. *«...փուշերուն մէջ ցանուածը այն է որ երբ կը լսէ խօսքը, աշխարհիս զբաղմունքը և հարստութեան խաբէութիւնը խօսքը կը խեղդեն, ու կ՚ըլլայ անպտուղ* ***(Մատթ. 13:22):*** Սիրելինե՛ր, այս վիճակը մարդուն հետապնդում է նրա ողջ կյանքի ընթացքում: Որպես այս մտքի հաստատում և շարունակություն՝ կարդանք Ղուկասի ավետարանի 21:33-36 խոսքերը. *«Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնաւ պիտի չանցնին: Իսկ դուք զգուշացէք ձեր անձերուն. չըլլայ որ սիրտերնիդ կերուխումով ու գինովութիւնով և աշխարհային զբաղմունքներով ծանրանայ, ու*

յանկարծակի այն օրը ձեր վրայ հասնի. Վասն զի բոլոր երկրին երեսը բնակողներուն ամէնուն վրայ որոգայթի մը պէս պիտի հասնի: Ուստի արթո՛ւն կեցէք, ու ամէն ատեն աղօթք ըրէք, որ արժանի ըլլաք այն բոլոր ըլլալու բաներէն ազատուելու և Որդւոյ մարդոյ առջեւ կայնելու»:

Սիրելինե՛ր, առօրյա կյանքում մենք բոլորս էլ և՛ ուտում ենք, և՛ խմում, բայց ամենակարևորն այն է, որ հասկանանք՝ մենք ոչ մեկից էլ լավը չենք: Ես հիշում եմ շատ հավատացյալների, որ խորացան մեծ-մեծ գործերի մեջ, մեծ-մեծ գումարներ վաստակեցին, ենթարկվեցին հարստության խաբեությանը և Տիրոջը թողեցին: Երևի շատերդ եք տեսել, թե ինչպես են մոլախոտերը փաթաթվում բույսին, նրանից սնվում և ի վերջո խեղդում այդ բույսին:

Սիրելինե՛ր,բոլոր ժամանակներում այդպիսի բաներ շատ են եղել. աշխարհի զբաղմունքը, հարստության խաբեությունը կխեղդեն Խոսքը, ու հավատացյալը կլինի անպտուղ: Ինչը որ կյանքի համար անհրաժեշտ է՝ մի կտոր հաց, մի ձեռք հագուստ, մենք անպայման կունենանք: *«Նայեցէ՛ք երկինքի թռչուններուն որոնք ոչ կը սերմանեն և ոչ կը հնձեն և ոչ ամբարի մէջ կը ժողվեն, ու ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք. չէ՞ որ դուք անոնցմէ աւելի լաւ էք»* ***(Մատթ. 6:26):*** Ինչո՞ւ է Պողոս առաքյալն ասում. *«Ան որ կին ունի, թող այնպես սեպէ, որ չունի» (Ա Կորնթ. 7:29):* Սա չի նշանակում, որ առաքյալը հորդորում է լքել ընտանիքը ու չկատարել ամուսնական պարտականությունները, այլ կոչ է անում հոգևոր ազատության, այսինքն՝ սիրտը չկապել երկրային հարաբերություններին, որպեսզի դրանք չխոչընդոտեն Աստծուն ծառայելուն:

Կարճ ասած՝ հավատացյալը պետք է այնքան ներքին ազատություն ունենա, որ երկրային կապերը, օրինակ՝ ամուսնությունը, հարստությունը, փառքը կամ որևէ այլ բան չդառնան կուռք կամ Աստծուց հեռացնող պատճառ:

Սիրելինե՛ր, երկրի վրա հրապուրանքները շատ են: Օրինակ՝ սատանան Ադամին ու Եվային խաբեց ու Աստծուց զատեց կերակուրի պատճառով: Աշխարհի զբաղմունքներով ու գայթակղություններով մարդկանց Աստծուց հեռացնելու գործում Նա

հմուտ է:Գիտեք, ո՛չ Հին Կտակարանում, Նոր Կտակարանում որևէ տեղ գրված չէ այն մասին, որ Տերը պետք է վարձահատույց լինի մարդուն՝ իր մարմնի, հագուստի կամ ճամփորդության համար արած ծախսերի համար: Ո՛չ, մենք այդպիսի բան չենք գտնի, բայց կգտնենք մեկ այլ բան. դու վարձք ունես այն ամենի համար, ինչը արել ես ուրիշին՝ նույնիսկ եթե մեկ բաժակ ջուր ես տվել: *«Ու ան որ այս պզտիկներէն մէկուն միայն գաւաթ մը պաղ ջուր կը խմցնէ աշակերտի անունով, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, բնաւ իր վարձքը պիտի չկորսնցնէ»* ***(Մաթ. 10:42):***

Ժողովող գրքի 6:7-ում գրված է. *«Մարդուն բոլոր աշխատութիւնը իր բերնին համար է, սակայն անոր հոգին չկշտանար»:* Բոլոր դարերում մարդու աշխատանքն իր որովայնի, իր մարմինը սնելու համար է եղել: Տերն էլ մեծամեծ գործեր արեց՝ մարդկանց բժշկեց, կերակրեց, ու երբ ծովի այն կողմն անցավ՝ նավակներով Նրա ետևից գնացին: Աշակերտները չէին ճանաչում Նրա հետևից գնացողների սրտերն ու նպատակները, մտածում էին, որ լսեցին Տիրոջ Խոսքը, դրա համար էլ հետևում են Հիսուսին, բայց Տերը բացեց գաղտնիքը և ասաց, որ այդ մարդիկ Իրեն հետևում են ոչ թե Աստծու Խոսքը լսելու համար, այլ՝ որ կերան ու կշտացան: Եվ այն ժամանակ Տերն ասաց Իր հետևից եկողներին, և այսօր էլ նույնը մեզ է ասվում. «Գնացե՛ք գործեցեք ոչ թե կորստական կերակուրի համար, այլ հավիտենական կյանքի համար»: Այսինքն՝ մեր աշխատելու, գործելու բուն նպատակը պետք է լինի հավիտենական կյանքը: Եվ քանի որ Տերը մեզ բերել է Իր Խոսքով սնվելու ու զորանալու, մենք էլ մարդկանց պետք է վկայենք ու հավիտենական կյանքի ճամփան ցույց տանք:

Քրիստոսով հարազատնե՛ր, Թվոց գրքի մեջ գրված է. *«Եւ ժողովուրդը չարաչար տրտունջ կ'ընէր Տէրոջը առջև. ու Տէրը լսեց, և իր բարկութիւնը բորբոքեցաւ, ու անոնց մէջ Տէրոջը կրակը վառեցաւ, և բանակին ծայրերը եղողները կորսնցուց... Եւ անոնց մէջի խառնիճաղանճ բազմութիւնը շատ ցանկացան. ու Իսրայէլի որդիներն ալ դարձեալ լացին, և ըսին, Ո՞վ մեզի ուտելու միս պիտի տայ. Եգիպտոսի մէջ մեր ձրի կերած ձուկերը, վարունգները ու սեխերը և*

պրասները ու սոխերը և խստորները միտքերնիս կու գան: Եւ հիմա մեր անձը չորցաւ. մանանայէն զատ ուրիշ բան մը չկայ աչքերնուս առջև» ***(Թվոց 11:1; 4-6):*** Մենք հասկանում ենք, որ այդ մարդիկ պատրաստ էին իրենց որովայնի համար ոչ միայն նորից ստրկանալու, այլև սեփական որովանի լիության համար նույնիսկ համաձայն էին իրենց նորածին արու զավակներին տալ փարավոնի զինվորներին՝ սպանելու: Սիրելինե՛ր, դրա համար էլ Աստծու բարկությունն եկավ նրանց վրա:

Պողոս առաքյալը մի կարևոր գաղտնիք է բացում Հռոմեացիներին ուղղված նամակում. *«Չ'ըլլայ որ կերակուրի պատճառաւ Աստուծոյ գործը քակես. ամէն բան մաքուր է. միայն թէ այն մարդուն է գէշ, որ ուրիշի գայթակղութիւն տալով կ'ուտէ: Աղէկ է միս չուտել և գինի չխմել, ոչ ալ բան մը ընել՝ որով քու եղբայրդ կը գլորի կամ կը գայթակղի կամ կը տկարանայ» (Հռ. 14:20,21):* Եկե՛ք անկեղծանանք ու ասենք, որ մարդկանց միջև (ամուսինների, քույր ու եղբոր, հարս ու սկեսուրի...) անախորժությունների ճնշող մեծամասնությունն առաջանում է նյութականի (հագուստ, կերակուր, գումար...) պատճառով: Դրանք մարմնավոր բաներ են: Այդ ամենից վեր կանգնած մարդու օրինակ է Հովնաթանի որդի Մեմփիբոսթեն. *«Եւ թագաւորը անոր ըսաւ, Ալ ինչո՞ւ քու բաներդուդ վրայ կը խօսիս. ես ըսի որ դուն ու Սիբա արտերը ձեր մէջ բաժնէք: Ու Մեմփիբոսթէ ըսաւ թագաւորին, Թող անիկա ամէնն ալ առնէ, որովհետև իմ թագաւոր տէրս խաղաղութեամբ իր տունը եկաւ»* ***(Բ Թագ. 19:29-30):*** Հոգևոր, Աստծուն սիրող մարդիկ միշտ էլ զիջող են: Օրինակ՝ Պողոս առաքյալն ասում է, որ ավելի լավ է մենք զրկանք կրենք, բայց անիրավություն չանենք: Դրա համար էլ հոգևոր մարդը միշտ շահով է դուրս գալիս:

Քրիստոսով եղբայրնե՛ր և քույրե՛ր, մարգարեություններից մեկում գրված է՝ Իմ ժողովուրդը ունայնության հնազանդվեց: Հիշենք, թե Ուկրաինայում կամ Արցախում մարդիկ ինչքա՜ն շքեղ տներ թողեցին: Լինում է, որ մարդն ասում է. «Տիրոջ գալուստը մոտ է», սակայն նայելով նրա գործերին, հարստությանը՝ չես ասի, որ այդ մարդն իր ասածին հավատում է:

Խնդրում եմ ձեզ, երբ անց-

նում եք գերեզմանոցի մոտով, հիշեք՝ բոլոր ննջեցյալներն իրենց գործերը կիսատ են թողել: Մենք էլ ենք կիսատ թողնելու, բայց զգույշ լինենք, որ մեր լապտերների յուղը կիսատ չլինի: Չլինի, որ մեր սիրտը կապվի ունայնության հետ: **Սաղմոս 17-ի 14-15-րդ** խոսքերում գրված է. *«Քու ձեռքովդ մարդոցմէն, ով Տէր, Աշխարհի մարդոցմէն՝ որոնց բաժինը այս կեանքին մէջ է, Ու անոնց փորերը շտեմարաններէդ կը լեցնես. Անոնց որդիներն ալ կը կշտանան, Ու իրենցմէ աւելցածը իրենց տղոցը կը թողուն: Իսկ ես արդարութեամբ պիտի տեսնեմ քու երեսդ. Երբ արթննամ քու դէմքէդ պիտի կշտանամ»:*

Սիրելինե՛ր, Քրիստոսի ներկայության մեջ է հոգևոր մարդու ուրախությունը, պետք է միշտ ունենալ շնորհակալ սիրտ: **Փիլիպպեցիս թղթի 3:18** խոսքերում կարդում ենք. *«Վասն զի շատերը կը քալեն, որոնց համար շատ անգամ ձեզի կ՚ըսէի, և հիմա լալով ալ կը զրուցեմ, այսինքն Քրիստոսի խաչին թշնամիներուն համար»:* Ո՞ւմ համար է լալիս Պողոս առաքյալը. այն հավատացյալների, «որոնց վերջը կորուստ է, որոնց աստուածը իրենց որովայնն է, ու անոնց փառքը իրենց ամօթն է, որոնք միայն երկրաւոր բաները կը մտածեն: Բայց մեր քաղաքականութիւնը երկինքն է, ուրկէ ալ Փրկչին կը սպասենք, Տէր Յիսուս Քրիստոսի. Որ պիտի նորոգէ մեր խոնարհ մարմինը՝ իր փառաւոր մարմինին կերպարանակից ըլլալու, այն զօրութիւնովը որ կարող է ամէնը իրեն տակ հնազանդեցնելու»: Այս խոսքերը հավատացյալների մասին են: Եկե՛ք յուրաքանչյուրս անձնաքննություն անենք, թե արդյոք մեր նեղությունները, նեղվածությունները, դժգոհությունները մարմնավոր դրդապատճառների՞ց են: **Սաղմոս 119-ի 36 խոսքում** կարդում ենք. *«Իմ սիրտս քու վկայութիւններուդ յոժարեցուր, Ու ոչ թէ ագահութեան»*: Այլընտրանք չկա՝ մեր սիրտը պետք է հոժարի կա՛մ Աստծու Խոսքին, կա՛մ ագահության: Տերը տեսնում է ձեր ամեն մի բարի գործը, և Նրանից պետք է լինի ձեր վարձատրությունը. եթե որևէ մեկին մի բան եք անում, երբեք նրանից փոխհատուցում մի՛ սպասեք:

Մի դեպք պատմեմ, որպեսզի շինություն ստանանք. մի քույր ունեինք, որի և՛ ամուսինը, և՛ երեք տղաներն ու հարսները

եկեղեցու անդամներ էին: Այդ քույրն ինչ էլ որ տան մեջ անում էր՝ ընտանիքի անդամները չէին գնահատում: Մի օր Ուկրաինայից եկած մեր եղբայրներից հյուրընկալվում են նրաց տանը, իսկ նրանցից մեկը մարգարեության պարգև է ունենում: Այդ եղբայրը մոտենում է քրոջն ու մարգարեանում. «Աղջի՛կս, մի՛ նեղվիր, որ քո արածները չեն գնահատում, Ես ամեն բան տեսնում եմ»: **Փիլիպպեցիս թղթի 3:13-ում** գրված է. *«Եղբայրնե՛ր, ես չեմ սեպեր որ բռներ եմ. բայց բան մը կայ, որ ետևի եղածները մոռցած եմ, ու առջևի եղածներուն կը դիմեմ»:*

Սիրելինե՛ր, եկե՛ք խորհենք՝ մենք կարո՞ղ ենք նույնպես ասել, որ անցած բաները մոռացել ենք և առաջ ենք գնում:

Մամիկոն Ղազարյան

ՏԵՍՆՈՒ՞Մ ԵՍ ԱՅՍ ԿՆՈՋԸ

Ղուկասի 7:36-39 - ում կարդում ենք. «Փարիսեցիներէն մէկը կ՚աղաչէր անոր որ իրեն հետ հաց ուտէ. ան ալ փարիսեցիին տունը մտաւ ու սեղան նստաւ: Եւ ահա քաղաքին մէջ մեղաւոր կին մը կար. երբ իմացաւ թէ անիկա փարիսեցիին տունը սեղան նըս-տեր է, շիշ մը անուշահոտ իւղ բերաւ. Ու ետևի կողմէն անոր ոտքերուն քով կեցեր՝ կու լար, և արցունքովը սկսաւ անոր ոտքե-րը թրջել, ու իր գլխուն մազերովը կը սրբէր, և կը համբուրէր անոր ոտքերը, ու իւղով կ՚օծէր: Ու երբ տեսաւ փարիսեցին, որ զանիկա հրաւիրեր էր, կ՚ըսէր իր միտքին մէջ, Ասիկա եթէ մարգարէ ըլլար, պիտի գիտնար թէ ո՞վ և ի՞նչպէս կին է իրեն դպչողը, վասն զի մեղաւոր է»:

Մենք այստեղ տեսնում ենք, որ փարիսեցին իր մտքում նախ՝ դատեց այդ կնոջը, հետո էլ՝ կասկածեց Հիսուսի մարգարե լինելու վրա: Նրա մտքերին Հիսուսը բարձրաձայն պատասխան տվեց. «Փոխ տուող մը երկու պարտական ունէր, մէկը



հինգ հարիւր դահեկան պարտք ունէր, ու միւսը յիսուն: Եւ որովհետև հատուցանելու կարողութիւն չունէին, երկուքին ալ շնորհեց. հիմա զրուցէ, Անոնցմէ ո՞րը աւելի պիտի սիրէ զանիկա: Պատասխան տուաւ Սիմոն ու ըսաւ, Ինծի այսպէս կ'երևնայ, թէ որո՞ւ որ շատ շնորհեց. ան ալ ըսաւ անոր, Ուղիղ դատեցիր: Ու դառնալով դէպ ի այն կինը՝ ըսաւ Սիմոնի, Կը տեսնե՞ս այս կինը. ես քու տունդ մտայ, դուն ոտքերուս ջուր չտուիր, բայց ասիկա իր արցունքովը ոտքերս թրջեց, և իր մազերովը սրբեց: Դուն ինծի համբոյր մը չտուիր, բայց ասիկա հոս մտնելէս ի վեր ոտքերս համբուրելէն չդադարեցաւ: Դուն իմ գլուխս ձէթով չօծեցիր, բայց ասիկա իմ ոտքերս անուշահոտ իւղով օծեց: Ասոր համար կ'ըսեմ քեզի, Ներուած են ասոր շատ մեղքերը, վասն զի շատ սիրեց. բայց որու որ քիչ կը ներուի, անիկա քիչ կը սիրէ. Ու ըսաւ անոր, Քու մեղքերդ ներուած են: Եւ անոր հետ սեղան նստողները սկսան իրենց մէջ ըսել, Ո՞վ է ասիկա որ մեղքերու թողութիւն ալ կու տայ: Եւ ինք ըսաւ կնոջը, Քու հաւատքդ քեզ փրկեց, գնա խաղաղութեամբ (41-50): Երբ Հիսուսը Սիմոնին հարցրեց. «Տեսնու՞մ ես այս կնոջ...», իհարկե, Սիմոնը տեսնում էր նրան՝ որպես մի մեղավորի, որի հետ Հիսուսը իրավունք չուներ շփվելու, առավել ևս՝ դպչելու, բայց Հիսուսը նրան ասաց. «...ես քու տունդ մտայ, դուն ոտքերուս ջուր չտուիր, բայց ասիկա իր արցունքովը ոտքերս թրջեց, և իր մազերովը սրբեց»: Սիմոնը տեսնում էր մի մեղավոր կին, բայց ի՞նչ էր տեսնում Հիսուսը... Նա տեսնում էր ապաշխարող, այս աշխարհի մեղքերից զզված ու հոգնած մի հոգու, ով այս աշխարհի «ջրերից» շատ էր խմել ու դարձյալ չէր հագեցել: Եվ երբ լսել էր Հիսուսի մասին՝ եկել էր Տիրոջ ոտքերն ընկել ու իր մազերով

սրբել Նրա ոտքերը:

Սիրելինե՛րս, մենք այստեղ տեսնում ենք երկու տարբեր բաներ. փարիսեցի Սիմոնը տեսնում էր մի մեղավորի, բայց Հիսուսը տեսնում էր ապաշխարող մի կնոջ, որն այրվում էր մեղքի կրակից: Սիմոնն այդ կնոջը տեսնում էր միայն արտաքինից, բայց Տերը տեսնում էր նաև նրա սիրտը, որ տանջվում էր մեղավորության խորը զգացումից: Օրենքըն ասում է, որ շնացող կնոջը պետք է քարկոծել: Օրինակ՝ Հովհ. 8:3 խոսքում գրված է. «Եւ դպիրները ու փարիսեցիները շնութեան մէջ բռնուած կին մը բերին անոր, ու զանիկա մէջտեղը կայնեցնելով՝ Ըսին իրեն, Վարդապե՛տ, այս կինը շնութեան մէջ այս մեղքը գործած ատենը բռնուեցաւ. Եւ օրէնքին մէջ Մովսէս մեզի պատուիրեց այսպիսիները քարկոծել. հիմա դուն ի՞նչ կ'ըսես ատոր համար: Հիսուս ասաց. ձեզմե անմեղ եղողը՝ առաջ անիկա թող քար ձգէ ատոր վրայ: Եւ նրանք իրենց խղճմտանքէն յանդիմանուելով՝ մէկիկ մէկիկ դուրս կ'ելլէին, ծերերէն սկսած մինչև յետինները. և Յիսուս մինակ մնաց, ու կինը մէջտեղը կայնած: Եւ Յիսուս վեր նայելով ու կնոջմէն զատ մէ՛կը չտեսնելով՝ ըսաւ անոր, Ով կին, ո՞ւր են անոնք որ քու վրայովդ ամբաստանութիւն կ'ընէին. մէ՛կը քեզ չդատապարտե՞ց: Եւ անիկա ըսաւ, Ոչ մէկը, Տէր. ու Յիսուս ըսաւ անոր, Ես ալ չեմ դատապարտեր քեզ. գնա ու ասկէ ետև մեղք մի գործեր»: Հիսուսը չդատապարտեց այդ մեղավոր կնոջը, որ պետք է քարկոծվեր օրենքի համաձայն, այլ ազատեց նրան դպիրների ու փարիսեցիների դատաստանից: Գողգոթայի խաչով Հիսուսը վերցրեց ոչ միայն այդ կնոջ, այլև ամբողջ աշխարհի մեղքը՝ դատապարտվելով մահվան: Հիսուսը Իր մեջ այնպիսի ուժ ու զորություն ուներ, որ մեղավոր մարդկանց ձգում էր դեպի Իրեն: Եվ այդ մեղավորության զգացումն էր այդ կնոջը բերել Հիսուսի մոտ:

Սիրելինե՛ր, Օրենքը միայն արտաքինն է տեսնում, բայց Քրիստոսի շնորհքն ու ճշմարտությունը թափանցեցին մեղավոր կնոջ ներսը, և նա բժշկություն գտավ: Ի՞նչ ասաց վերջում Հիսուսն այդ կնոջը. «Գնա՛, քու հավատքդ քեզի փրկեց, գնա խաղաղութեամբ»: Չնայած այդ կինը շատ բան արեց Հիսուսի

համար, բայց Նա չասաց, թե՝ գնա՛, քո գործերը քեզ փրկեցին, այլ՝ քո հավատքը քեզ փրկեց:

Փառք Տիրոջը, որ մեզ փրկողը ոչ թե մեր գործերն են, այլ՝ մեր հավատքը: Հիմա դու ո՞ւմ ես նման, սիրելի՛ հոգի. փարիսեցի Սիմոնի՞ն, որ միայն արտաքինն էր տեսնում և մեղադրում էր, թե՞ Հիսուսին, որ տեսնում է մարդու սրտում ապաշխարության ցանկություն, և ձգտում դեպի Տիրոջը:

Եսայի մարգարեն, որ Հիսուսից յոթ հարյուր տարի առաջ էր ծնվել, իր մարգարեության 48-րդ գլխում հանդիմանում է Իսրայելի ժողովրդին՝ խստասրտության համար. «Դուն ոչ լսեցիր, ոչ ալ գիտցար, Եւ սկիզբէն քու ականջդ չբացուեցաւ. Վասն զի գիտցայ որ դուն խիստ նենգաւոր ես, Ու դուն որովայնէ ապստամբ կոչուեցար: Ես իմ անուանս համար բարկութիւնս պիտի ուշացնեմ Եւ իմ փառքիս համար համբերող պիտի ըլլամ քեզի, Որպէս զի քեզ չկորսնցնեմ» (8-9): Տեսե՛ք, այս ժողովուրդը իր ողջ գոհության ընթացքում ապստամբեց Տիրոջ դեմ ու բարկացրեց Նրան, բայց Տերը Իր փառքի համար համբերեց մինչև Գողգոթայի խաչը, և այդ ամբողջ բարկությունը Աստված թափեց ոչ թե մեղավոր ու խստապարանոց ժողովրդի, այլ Իր Որդու վրա: Տերն ուշացրեց Իր բարկությունը մինչև Գողգոթայի Խաչը, որպեսզի այսօր ես ու դու փրկվենք: Հիմա եթե մենք հավատանք, որ Հիսուսը մեռավ մեր մեղքերի համար, կտեսնենք այն փառքը, նոր Երուսաղեմ քաղաքը, որի ճարտարապետն ու արարիչն Աստված է: Երանի՛ նրան, ով Վերին Երուսաղեմ քաղաքի բնակիչ կլինի: Ուրեմն հույսով սպասենք մեր Տիրոջը, որ պիտի գա և մեզ չպիտի «կորսնցնի»: Նա այսօր էլ համբերում է, որ դու քո մեղքերով (ինչքան էլ որ դրանք շատ լինեն) գաս, հանձնվես Հիսուսի ձեռքերի մեջ, և քո կյանքում էլ իրականանա Նրա փրկությունը:

Սիրելի՛ մեղավոր, մի՛ տանջվիր քո մեղքերի մեջ, այլ մեղավոր կնոջ նման դու էլ արի՛ Հիսուսին. Նա քեզ է սպասում, որպեսզի չկորսվես, այլ հավիտենական կյանք ունենաս ու լինես նոր Երուսաղեմի բնակիչ: Այնտեղ ո՛չ ցավ կա, ո՛չ մահ, ո՛չ արցունք, այլ՝ հավիտենական ուրախություն՝ սուրբերի հետ միասին:

Հրահատ Ամիրբեկյան

Թե ինչպես բժշկվեցի քաղցկեղից

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ես 35 տարեկան էի, երբ ինձ մոտ քաղցկեղ հայտնաբերվեց: Ունեի կին, երեխաներ, և ինձ համար սարսափելի էր մահվան մասին մտածելը: Հիշում եմ, երբ ախտորոշման պատասխանն իմացա՝ տուն վերադարձա, նստեցի բազմոցին ու դառնորեն լաց եղա: Ինձնից առավել տանջվում էր մայրս. «Որդի՛ս, այնքան եմ ուզում օգնել քեզ, բայց չգիտեմ՝ ինչպե՛ս...»:

Որպես հավատացյալ՝ ես, իհարկե, գիտեի, որ իմ կյանքը Աստծու ձեռքերում է, բայց այս ամենին առաջին արձագանքս անվերջանալի հարցերն էին՝ ուղղված Աստծուն: Հետո հարցերիս պատասխաններն սկսեցի փնտրել Աստվածաշնչում:

Խորանալով Սուրբ Գրքի էջերում՝ աչքերս ասես բացվեցին, և ես տեսա, թե որքա՛ն մեղքեր եմ գործել հենց հավատքի մեջ, ու հաճախել եմ եկեղեցի: Այդ ժամանակ մի կողմ թողեցի իմ բոլոր հարցերը և խնդրեցի Տիրոջը. «Օգնի՛ր ինձ, Տե՛ր, գիտակցելու իմ բոլոր մեղքերն ու սխալները: Օգնի՛ր ուղղել այդ բոլոր սխալները, քանի դեռ ապրում եմ այս երկրի վրա, որպեսզի երբ ժամանակը գա, և կանգնեմ Քո առջև՝ մաքուր գտնվեմ»:

Հիշողությունս կարծես պայծառանար, ու ես հերթով տեսնում էի, թե ինչեր էի արել: Հիշեցի՝ ինչպես էի մի անգամ վիրավորել տարեց մի մարդու, ինչպես էի անարդար վարվել իմ ընկերների հետ, ինչպես էի ստել... Ես քարացել էի:

Կարճ ժամանակահատվածում կորցրել էի 35 կգ քաշ, ուժերս սպառվել էին, գրեթե չէի կարողանում շարժվել, երկար խոսել, երեխաների ձայներն անգամ նյարդայնացնում էին ինձ, դարձել էի դյուրագրգիռ... բայց, երբ արթնացան այդ հիշողություններս, ու տեսա իմ բոլոր չար գործերը, մի կերպ ուժ հավաքեցի, գտա այն մարդկանց հեռախոսահամարները, ում հանդեպ վատ էի վարվել, և հերթով զան-

գեցի. «Ներե՛ք ինձ, խնդրու՛մ եմ, որ տարիներ առաջ ձեզ հետ վատ եմ վարվել...»: Ու բոլորն էլ ինձ մխիթարում էին. «Ես քեզ ներում եմ, միայն թե դու ապրի՛ր»:

Զարմանալի ազատություն էր թափանցում հոգուս մեջ: Եվ բոլորին, ում ես ճանաչում էի (անկախ նրանից, թե ով՝ ո՛ր եկեղեցին էր հաճախում, միայն թե քրիստոնյա լինեին), խնդրում էի, որ աղոթեն ինձ համար: Տարբեր հարանվանություններից մարդիկ (ոմանց հազիվ էի ճանաչում) աղոթում էին ինձ համար:

Մի անգամ նույնիսկ 98 տարեկան մի պապիկ, ում մի ժամանակ մեր գործարանը օգնել էր ինչ-որ փոքր հարցում, իմանալով իմ հիվանդության մասին, երկու երիտասարդի էր ուղարկել ինձ մոտ: «Ահա՛, մեր հավատացյալ պապիկը քեզ մեղր է ուղարկել և խնդրել փոխանցենք իր խոսքերը. «Կե՛ր, առողջացի՛ր, մենք աղոթում ենք քեզ համար»»:

Նրանց գնալուց հետո ես նստեցի մեր տան նույն բազմոցի վրա ու նորից հոնգուր-հոնգուր լաց եղա, բայց այս անգամ՝ երջանկությունից. «Տե՛ր, ո՞վ եմ ես, որ այսքան ջերմ Սեր ու այսպիսի հոգատարություն ես ինձ ցուցաբերում»:

Բժիշկներն ինձ առաջարկել էին քիմիաթերապիա, և ես չգիտեի՝ ընդունե՞լ դա, թե՞ ոչ, քանի որ գիտեի բազում մարդկանց, որ անցել էին քիմիաթերապիա բուժընթացը, բայց, միևնույնն է, չէին բուժվել:

Եվ ահա, աշնանային մի երեկո, հազիվ քայլելով դուրս եկա մեր բակ, նայեցի աստղազարդ երկնքին և անկեղծորեն սիրտս բացեցի Հայր Աստծու առջև. «Երկնայի՛ն Հայր, ի՛մ Տեր, ի՛մ Արարիչ, Դու գիտես իմ մարմնի յուրաքանչյուր բջիջը: Դու գիտես, թե ի՛նչ է կատարվում ինձ հետ: Հիմա ես չգիտեմ՝ ինչ անեմ: Ես վախենում եմ: Ես չեմ ուզում, որ երեխաներս անհայր մեծանան, քանի որ ինքս էլ անհայր եմ մեծացել: Խնդրո՛ւմ եմ, օգնի՛ր ինձ»: Այդ գիշեր երազումս տեսա Հիսուս Քրիստոսին: Նա մոտեցավ, բռնեց վախից դողացող ձեռքս և ասաց. «Գնա՛ հիվանդանոց»: Դրանից ես ուժ ստացա: Եվ, իհարկե, այդպես էլ արեցի: Սկսեցի քիմիաթերապիան: Թեպետ դա շատ դժվար ընթացք էր, բայց ես գիտեի, որ Աստված ինձ հետ է: Մի կարևոր բան էլ կատարվեց. քաղցկեղով շատ հի-

վանդների ես ավետարանեցի՝ պատմելով Հիսուս Քրիստոսի անսահման Սիրո ու փրկարար զորության մասին:

Քիմիաթերապիայից հետո բժիշկն ինձ կանչեց իր աշխատասենյակ և մխիթարող լուր հայտնեց. ուռուցքը երկու անգամ փոքրացել էր: Դրանից հետո ես անցա նաև ճառագայթաբուժության կուրս, որը նույնպես բարդ ընթացք էր ինձ համար, սակայն որից հետո ինձ իսկական հրաշք էր սպասվում:

Այս անգամ անալիզների արդյունքը ապշեցուցիչ էր. ուռուցքը բոլորովին անհետացել էր, ես էլ ինձ շատ լավ էի զգում:

Այդ օրը դուրս եկա հիվանդանոցից, նստեցի մեքենան (ես էի վարում) ու... ոչ թե աղոթում էի, այլ պարզապես գոռում էի ուրախությունից. «Տե՛ր, ի՞նչ կարող եմ անել Քեզ համար»:

Եվ տանը, երբ կարդում էի Աստվածաշունչը, հասկացա, թե Աստված ամենից առավել ի՛նչ է ուզում, որ ես անեմ՝ իմ շուրթերով գոհանամ Նրանից: Հասկացա, որ իմ շուրթերով գոհություն կլինի նաև, եթե ես մարդկանց պատմեմ իմ վկայությունը, ինչը անում եմ մինչ օրս:

Աստված նույնն է՝ երեկ, այսօր և հավիտյան, ու ինչպես դարեր առաջ, այսօր էլ Նա շարունակում է բժշկել մարդկանց:

Վիկտոր Կորոբով

ԲԱՑԵ՛Ք ԴԱՐՊԱՍՆԵՐԸ

Ես մեծ հարգանքով եմ վերաբերվում այն մարդկանց, որ հալածվել ու աքսորվել են հավատքի համար, բայց եղբայրներն ինձ մի պատմություն են պատմել, որը չեմ կարողանում մոռանալ:

Մի եղբայր աքսորավայրից վերադառնալուց հետո հերկում է իր արտը և հարևանի հետ ինչ-որ հարցում վեճ է ունենում: Նա վիրավորվում է ու խռովում հարևանից: Այդ մարդ, որ Քրիստոսի հավատքի համար դատապարտվել է ու տարիներ անցկացրել բանտում և աքսորավայրում, ոչ մի կերպ չի ընդունում հարևանին ներելու վերաբերյալ եղբայրների հորդորն ու խնդրանքները, համառորեն չի հրաժարվում իր ներսի վիրավորանքից:

Որոշ ժամանակ հետո նա հիվանդանում է, նրան տեղափոխում են հիվանդանոց, և հասնում է հոգին ավանդելու ժամանակը: Այդ ժամանակ նա գոռում է. «Բացե՛ք դարպասները, բացե՛ք դարպասները, ես չեմ կարողանում ներս մտնել»: Բժշկին թվում է, թե նա ուզում է, որ դուռը բացեն, և ասում է. «Բացե՛ք դուռը, որ էլ չգոռա», բայց նրա հարազատները, որ հավատքի մարդիկ են լինում, հասկանում են՝ խոսքը երկնքի դարպասների մասին է:

Մի՛ պահեք ձեր սրտերում վիրավորանքը, այն փակում է ձեզ երկինք տանող ճանապարհը:

Սերգեյ Մոիսեեն Բելառուս

ՄԱՅՐԱԿԱՆ ԱՂՈԹՔԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Պատմեմ մի դեպք հավատացյալների աղոթքի զորության մասին: Դեպքը կատարվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին:

Քրիստոնյա բազմազավակ մի ընտանիքի որդիներից մեկը (որ անհավատ էր և հրաժարվում էր Աստծուն դառնալ) ծառայում էր ռազմածովային նավատորմում: Մի օր նավը, որի վրա ծառայում էր նա, հարձակման ենթարկվեց, և նավի վրա գտնվողներից փրկվեց միայն այդ երիտասարդը. ծնողների աղոթքներով Աստված խնայեց նրա կյանքը:

Պատերազմից նա վերադարձավ որպես հերոս՝ կուրծքը շքանշաններով զարդարված:

Տարիներն անցնում էին, մայրը գնալով ծերանում էր, և մի օր մահը վրա հասավ:

Մոր թաղման ժամանակ որդին հանեց իր բոլոր շքանշաններն ու դրեց մոր կրծքին՝ ասե-լով. «Սրանք դու վաստակել ես…»:

«Մոր աղոթքը ծովի հատակից էլ դուրս կհանի խեղդվողին»՝ պատգամում է ասույթը: Եվ դա այդպես է:

Ծնողների աղոթքը՝ իրենց երեխաների համար, մեծ զորություն ունի:

Եկե՛ք գոհություն հայտնենք Տիրոջը հավատացյալ մայրերի և հայրերի համար, ովքեր իրենց աղոթքներով պահպանում են իրենց երեխաներին: Շատերս գուցե կորսված լինեինք, եթե չլինեին մեզ համար արված աղոթքները: Փառք Տիրոջը:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ՝ ՄԱՅՐԻԿԻՍ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

Մի քանի քրիստոնյա երիտասարդներ քննարկում էին, թե Աստվածաշնչի թարգմանություններից որն է լավագույնը:

Առաջինը նշում էր, որ իրեն դուր է գալիս պարզ ու գեղեցիկ լեզվով շարադրված տարբերակը:

Երկրորդը կարծում էր, որ ամենուրեք օգտագործվող տարբերակն է լավագույնը, քանի որ այն ավելի մոտ է եբրայերեն և հունարեն բնօրինակին:

Երրորդ քրիստոնյան պնդում էր, որ ավելի կողմնակից է ժամանակակից թարգմանությանը:

Մինչ եղբայրները բանավիճում էին, նկատում են, որ իրենց չորրորդ եղբայրը լուռ է, և երբ ուզում են իմանալ նրա կարծիքը, նա ասում է.

– Ինձ ամենից շատ դուր է գալիս մայրիկիս թարգմանությունը:

Չհասկանալով վերջինիս խոսքերը՝ նրանք խնդրում են բացատրել, թե ի՞նչը նկատի ունի:

-Իմ մայրիկը Աստվածաշունչը թարգմանում է իր առօրյա կյանքով, և այդ թարգմանությունն ամենահամոզիչ թարգմանությունն է, որ երբևէ տեսել եմ:

ՆԻԿՈԼԱՅ ԿՈՒԿՍՅՈՒԿԻ ՓՈՐՁԻՑ

Երբ ապաշխարեցի, աշխարհիկ զվարճություններից միակ բանը, որ մնացել էր, շաշկին էր: Ու երբ սկսվում էին շախմատի համաշխարհային խաղերը Անատոլի Կարպովի և Գարրի Կասպարովի միջև, ես հրապուրվում էի այդ խաղերով ևս: Մի օր երազ տեսա. ես այն դահլիճում եմ, որտեղ ընթանում են շախմատի համաշխարհային խաղերը, ու ասես խոնարհվում եմ շախմատի ֆիգուրների և գրոսմայստերների առջև: Արթնացա և ամոթով ու դառը զղջումով հասկացա, որ Աստծուն խոնարհվելու փոխարեն խոնարհվում եմ կուռքերի առջև: Փառք Աստծուն, որ ինձ խելքի բերեց:

ՕԼԳԱ ԼԵՄԵՇՅՈՒԿԻ ՊԱՏՄԱԾԸ

Օլգա և Նաստյա Լեմեշյուկները մանկավարժ քույրեր էին և աշխատում էին Արևմտյան Բելառուսի դպրոցներում: Երբ նրանք դարձի են գալիս, ամբողջ սրտով նվիրվում են Աստծուն և սկսում ծառայել Նրան: Մի անգամ Օլգա Լեմեշյուկի տանը այսպիսի մի դեպք է կատարվում: Օլգայի տուն է ներխուժում մի մարդ, որին հետապնդում էր մեկ ուրիշը՝ դաշույնը ձեռքին, և ուզում էր սպանել նրան: Մարդը փորձում է թաքնվել Օլգայի տանը, բայց հետապնդողը հասնում և բռնում է նրան ու բարձրացնում է ձեռքը, որ սպանի: Օլգան իրեն չի կորցնում, միանգամից կանչում է Աստծուն.

- Աստվա՛ծ իմ, թույլ մի՛ տուր, որ արյուն հեղվի իմ տան մեջ: Թող սպանություն չկատարվի իմ աչքերի առջև այն տանը, որտեղ այնքա՛ն աղոթքներ ու գոհություններ են բարձրացրել Քո զավակները: Ամեն:

Աստված լսում է Օլգայի աղոթքը. մարդասպանի ձեռքը քարանում է օդում, և նա չի կարողանում իրականացնել իր մտադրությունը:

ՈՒՐԵՄՆ՝ ՄԻ՛ ԱՐԵՔ ԴՐԱՆՔ

- Աստվա՛ծ, ինչո՞ւ են այսքան շատ սուտը, բռնությունը, անառակությունը, պատերազմները, մահերը,- հարցրին մարդիկ Աստծուն:

- Ձեզ դուր չի՞ գալիս:

- Իհարկե՝ ո՛չ:

- Ուրեմն՝ մի՛ արեք դրանք,- պատասխանեց Աստված:

ՍԻՐԵԼԻ՛ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ

Աստված սիրում է ձեզ և ուզում է, որ դուք հավատաք Իրեն ու փրկություն ունենաք: Այդ մասին կարդում ենք **Հովհաննու 3:16**-ում. *«Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց, որ ով Նրան հավատա՝ չկորչի այլ հավիտենական Կյանք ունենա»:* Եթե դուք ուզում եք ավելին լսել ու իմանալ Աստծո և Նրա Խոսքի մասին, կարող եք դիմել հետևյալ հեռախոսահամարներով.

ԵՐԵՎԱՆ

Ավան	093 81-31-53	Մալխասյան Օնիկ
Զեյթուն	055 66-82-06, 099 66-82-06	Այդինյան Լևոն
Էրեբունի	093 53-43-68	Բարսեղյան Մնացական
Կենտրոն	094 84-35-04	Պետրոսյան Հայկ
Կոմիտաս	093 26-20-72	Ալավերդյան Սարգիս
ՀԱԹ (Բանգլադեշ)	055 72-28-12	Հովհաննիսյան Գևորգ
ՀԱԹ (Բանգլադեշ)	093 38-12-42	Ղազարյան Արտուշ
Նորքի զանգված	099 87-38-88, 077 87-38-80	Ղազարյան Ահարոն
Նորքի զանգված	091 16-49-45	Անտոնյան Արթուր
Շենգավիթ, Ջարբախ	077 55-57-55	Ամիրջանյան Արմեն
Աջափնյակ	093 83-71-31	Վարդանյան Անդրանիկ
Քանաքեռ	093 53-25-26	Ամիրբեկյան Հրահատ
3-րդ մաս	093 83-71-31	Վարդանյան Անդրանիկ

ՇՐՋԱՆՆԵՐ

Աբովյան	094 91-43-24	Քեշիշյան Ջանիկ
Այավերդի	094 30-80-40	Դավոյան Վալերի
Աշտարակ	098 01-72-60	Մկրտչյան Անդրանիկ
Ապարան	093 77-06-70, 071 77-06-70	Գասպարյան Միշա
Արարատ	094 20-60-36	Ներսիսյան Նորիկ
Արթիկ	077 70-28-38	Փիլոյան Պողոս
Արմավիր	091 75-99-20	Մխիթարյան Ռադիկ
Արմավիր	093 19-52-04	Մարկոսյան Վրեժ
Արտաշատ	093 72-48-88	Համբարձումյան Վաչագան
Արտաշատ (գյուղերը)	093 83-71-31	Վարդանյան Անդրանիկ
Արտաշատ (Ազատավան)	077 28-75-91	Սամվելյան Պերճ
Արցախ	094 00-94-08	Մարդյան Միեր
Գավառ	093 68-84-92	Մանուկյան Վարուժան
Դիլիջան	093 18-77-33	Սահակյան Սասուն
Եղեգնաձոր	077 40-26-24	Մարտիրոսյան Արզուման
Զորավան, Եղվարդ	098 85-05-02, 091 24-53-60	Մկրտչյան Մասիս
Զանգեզուր	094 00-94-08	Մարդյան Միեր
Էջմիածին	093 18-75-30	Սուկաչ Էդիկ
Իջևան	093 18-77-33	Սահակյան Սասուն
Հրազդան	094 22-33-15	Օհանյան Աշոտ
Ճամբարակ (Կարմիր)	093 18-77-33	Սահակյան Սասուն
Մասիս	091 71-62-64, 093 71-62-64	Հարությունյան Մելսիկ
Մարտունի	093 86-30-13	Արշակյան Մելիք
Նոյեմբերյան	094 92-01-90	Նավասարդյան Ռուբեն
Շիրակի մարզ	099 30-79-69	Դարմանյան Գրիշա
Չարենցավան	093 28-64-13	Հայրապետյան Գևորգ
Սպիտակ	094 92-00-03	Խաչատրյան Արտակ
Սևան	093 48-76-43	Նաղարյան Արթուր
Վանաձոր	094 92-00-03	Խաչատրյան Արտակ
Վանաձոր	099 88-05-50	Նազարյան Ավետիք
Վարդենիս	094 91-44-80	Նշանյան Տոլիկ
Վեդի	094 03-26-16	Աղաբեկյան Գառնիկ (Ռուբիկ)
Տաշիր	093 09-84-33	Սուքիասյան Նորիկ
Տավուշ	093 43-72-33	Օհանյան Արթուր

www.barilur.org
info@barilur.org